

# ՆՈՐ ՏԱՐԻ. ՆՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՆՈՐ ՃԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ... ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ԿՅՎԱՍՆԵՆՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆԸ»

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Մունիցիպալիտետի կրթահամակարգի ղեկավարի պաշտոնում նա ըստ պատշաճի կազմակերպում էր կրթական աշխատանքը, գործի մեջ արմատավորում նոր ու առաջավոր մեթոդներ:

**- Ինչո՞վ նշանավորվեց Ձեր եռամսյա գործունեությունը ռեսուրս-կենտրոնում:**

- Իմ աշխատանքի գլխավոր ուղղությունը սովորողների կրթական մակարդակի բարձրացումն էր, իհարկե, ոչ միանգամից, աստիճանաբար. դա առաջին: Եվ ապա՝ ընդլայնել մանկապարտեզների ցանցը: Կարող եմ ասել, որ հիմնականում լուծվեց մանկապարտեզների ընդլայնման ցանցը, եւ այդ գործընթացը առայսօր շարունակվում է: Եթե նախկինում շրջանում գործում էր միայն մեր՝ քաղաքի մանկապարտեզը, ապա այսօր նմանատիպ հիմնարկներ են գործում Գանձա, Յեզտիա, Օրոջալար, Սաթա, Մեծ Խան-չալի եւ այլ համայնքներում: Նրանցում հաճախող երեխաների թիվը եռապատկվել է եւ այժմ հասնում է 750-ի:

Իմ ղեկավարած տարիներին կրթական համակարգում գործողության մեջ դրվեց «1 + 4» ծրագիրը, որը ոչ վրացալեզու աշակերտներին մայրենի լեզվով ընդունելության քննություն հանձնելու հնարավորություն տվեց: Դրա եւ շրջանում պետական լեզվի դասավանդման մակարդակի բարձրացման շնորհիվ նկատելիորեն ավելացավ վրացերենին տիրապետողների թիվը, մեծացավ Նինոծմինդայից երկրի բարձրագույն հաստատություններ սովորելու ցանկությունը ունեցողների հոսքը, եւ այժմ էլ շարունակվում է:

Երկրի տարբեր տարածաշրջաններում, փորձի փոխանակման նպատակով, բազմաթիվ ծրագրեր են իրականացվել: Նինոծմինդայից ոչ քիչ թվով մանկավարժներ վերապատրաստման գործընթացներ են անցել երկրի տարբեր քաղաքների կրթական ոլորտներում:

Որպես ուսումնական գործընթացի

լրացուցիչ օղակ՝ ավելացնենք, որ շատ դպրոցներ համալրվել են մասնագետ կադրերով, հատկապես՝ օտար լեզուների գծով: Վերանորոգվել եւ անհրաժեշտ պարագաներով կահավորվել են շատ դպրոցներ: Բառացիորեն վերջերս, այս ուսումնական տարվա նախաշեմին, հիմնական նորոգման ենթարկվեցին Գանձայի թիվ 1, Փոքր Գոնդուրայի, Սպասովկայի, Սաթայի դպրոցները, որոնցում ստեղծվել են ուսման լավագույն պայմաններ:

**- Ձեր գործունեության համար կարեւոր ժամանակաշրջան հանդիսացավ Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր ընտրվելը:**

- Այո՛, 2014 թվականից շրջանային ժողովի անդամ էի, կրթության, սպորտի ու երիտասարդության հարցերով հանձնաժողովի նախագահ: Այդ ընթացքում եւս քիչ գործ չկատարվեց շրջանում կրթության ու սպորտի զարգացման ուղղությամբ: Չնայած որ շրջանում այնքան էլ մեծ հնարավորություններ չկան երիտասարդությանը աշխատանքի բնագավառ ընդգրկելու համար, բայց եւս այնպես, ամեն տարի կրթական, մարզական ու մասնագիտական ուղղությունները թարմացվում են երիտասարդ կադրերով, հոգ է տարվում երիտասարդ մասնագետներին աշխատանքով ապահովելու համար: Ինչ վերաբերում է մարզածեղիին, ապա շրջանում տարեցտարի նոր հաջողություններ են ձեռք բերվում մարզական ասպարեզում: Նինոծմինդայի մարզիկները մասնակցում են ազատ ոճի ըմբշամարտի, շախմատի, կարատեի, ֆուտբոլի եւ այլ մարզածեղի միջազգային մրցումների, նվաճում ոսկե եւ արծաթե մեդալներ, գովասանագրեր ու գավաթներ:

**- 2017 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին՝ որպես «Վրացական երագանքի» կողմից առաջադրված թեկնածու, դուք համոզիչ հաղթանակ տարաք եւ ընտրվեցիք Նինոծմինդայի քաղաքապետ:**

- Իմ հանդեպ ցուցաբերած բարձր վստահությունը եւ զգում եմ եւ շնորհակալությունս եմ հայտնում երկրի ղեկավարությանը, շրջանի բնակչությանը, բոլոր ընտրողներին: Վստահությունը՝ վստահություն, բայց դա արդարացնել է պետք:

**- Իսկ որո՞նք եք համարում առավել կարեւոր խնդիրներ:**

- Նախընտրական քարոզարշավի օրերին եղանք բոլոր համայնքներում, ունկնդիր եղանք բնակչության ծայրին, առաջ քաշվեցին մարդկանց հուզող շատ ու շատ հարցեր: Հենց դրանցից առավել կարեւորներն ու առաջնահերթություններն ենք աչքի առաջ առնում եւ ձեռնամուխ լինում դրանց իրականացմանը:

Իր գործունեության շուրջ երկու տասնյակ տարիների ընթացքում մեր շրջանից Վրաստանի խորհրդարանի անդամ Հենզել Մկոյանի ջանքերով շատ ու շատ հիմնահարցեր են լուծվել, թե՛ անհատական եւ թե՛ խմբային առաջարկություններ են եղել, որոնք եւ կյանքի են կոչվել: Բայց, իհարկե, նորանոր խնդիրներ են ծագում, որոնք անտեսել չի լինի: Բնակչությանը խմելու ջրով ապահովելը դարձյալ օրակարգից չի իջնում, ճանապարհների բարեկարգումը կա ու կա, որպես առաջնահերթություններ՝ ենթակառուցվածքները միշտ ուղեկից են, մշակույթի, կենցաղի տների, մարզական կյանքի հարցերը, գյուղատնտեսության առաջընթացը, մթերքների իրացումը չենք կարող անտեսել: Պետք է անպայման զբոսաշրջությանը ուշադրություն դարձնել: Մեր համայնքների սանիտարական վիճակին, բնակավայրերի մաքրությանը՝ նույնպես: Հապա ծնունդ ճանապարհների մաքրումը: Էլ ո՞րը թվենք: Հիմնահարցերը շա՛տ-շատ են, եւ դրանք մենք կհաղթահարենք աստիճանաբար, քայլ առ քայլ՝ ուշադրությունը բեւեռելով կյանքի ընթացքին ու նրա պահանջներին:

ՄԱՆՈՒԿ ԿԱՐՈՒՄԱՆՅԱՆ

## ՏԱՐԵԼԻՑ

### ՄԵԿ ՏԱՐԻ՝ ԱՌԱՆՅ ԱՆԱՀԻՑ ԲՈՍՏԱՆԳՅԱՆԻ



Ուղիղ մեկ տարի առաջ՝ 2017-ի հունվարի 8-ին, հանկարծամահ եղավ վիրահայության ամենաակտիվ գործիչներից մեկը՝ բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող, Վրաստանի եւ Հայաստանի գրողների միությունների անդամ, Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ, «Կամուրջ» տարեգրքի խմբագիր եւ հրատարակիչ Անահիտ Բոստանգյանը:

Նրա աճյունն ամփոփվեց Վրաստանի հայ գրողների ու հասարակական գործիչների «Խոջիվանքի» պանթեոնում, ուր եւ ս.թ. հունվարի 8-ին, վախճանից մեկ տարի անց, տեղի ունեցավ հանգուցյալի մահվան տարելիցին նվիրված հոգեհանգստյան կարգ, որը վարեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու լուսարարապետ Տեր Մանուկ քահանա Ջեյնալյանը:

Արարողությանը, հարազատների հետ մեկտեղ, իրենց մասնակցությունը բերեցին թբիլիսյան հասարակական-քաղաքական գործիչներ, գրողներ, դերասաններ, մանկավարժներ...

Տապանաքարին խոնարհված ծաղիկների եւ ծխացող խունկի բույրով շնչող պանթեոնում հնչեց Տիրոջ գավակին երկնային թագավորությանը արժանացնելու հանգստյան աղոթքը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂՎԱՅԱՆ

## ...ՀՈՒՆԻՍԻՆ ՄԵՋ ԱՅՑԻ ԿԳԱ ԱՐԱԳԻԼԸ



- 2017 թվականը ե՛լ ձեռքբերումների տարի էր, ե՛լ կորստի: Կորուստն անդառնալի էր. մենք երկնային կյանք ճանապարհեցինք, համեմայնդեպս, ինձ համար իմ գրական կնքամայր տիկին Անահիտ Բոստանգյանին... Բավական այլ դժվարություններ էլ եղան: Հատկապես, երբ ստիպված եղա կտրուկ որոշումներ կայացնել, որոնք այժմ արդեն ձեռքբերում եմ համարում, քանի որ արդյունքում իմ կողքին մնացին ամենահարազատները...

Բայց եղավ նաեւ ամենամիտրականը՝ ամենամեծ ձեռքբերումն իմ նորաստեղծ ընտանիքն է: Ամուսնացանք աշնանը եւ այժմ հյուսում ենք մեր ընտանիքը՝ երջանիկ ու փոխադարձ հարգանքի մթնոլորտում: 2018 թվականից բարի ակնկալիքներ ունեն ու հավատում եմ, որ ավելի շատ ձեռքբերումներ կունենան: Թերեւս ամենաերանելին, Աստուծո կամոք, Արագիլի մատուցած հրաշամանուկը կլինի, որի աշխարհ գալուն սպասում ենք հունիսին: Մտադիր եմ նաեւ դիսերտացիայիս ուղղությամբ աշխատանքիս վերականգնումը, որն իրականացնելու եմ Թբիլիսիի Ի.Վ. Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի հայագիտության բաժնում, դոկտորանտուրայիս թեման է՝ «18-րդ դարի հայ-վրաց գրական հարաբերությունները»: Այնպես որ, ջանք ու եռանդ չեմ խնայելու:

Մարդկանց մաղթում եմ, որ մի բուռ բարություն ավելացնեն իրենց հոգում... եւ մանկան մաքրություն, ինչպես կասեր Մեծն Սեւակը: Այսօր միայն դրա կարիքն եմ տեսնում...

Շնորհավոր՝ Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

**ԴԻԱՆԱ ՏԵՐ- ԲԱՂՎԱՍՏՐՈՎԱ**  
31 տարեկան

Թբիլիսի

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ

Երբ դպրոցն ունի բանիմաց, բազմաշնորհ, սկզբունքային ու մարդկային ղեկավար, նա պատվով է կատարում իր առջեւ դրված խնդիրները:

Մառնեուլիի մունիցիպալիտետի Չանախչի գյուղի հայկական հանրային դպրոցն ունի հենց այդպիսի ղեկավար:

Մեր հարգարժան տնօրեն Մանանա Մանուկյանին ուղղված խոսքն այսօր ողողված է առանձնակի երախտագիտությամբ, որովհետեւ նրա կյանքի ուրախալի իրադարձությունների՝ ծննդյան 60 եւ աշխատանքային գործունեության 30 ամյակների առիթով է:

Տասնյակ տարիներ կտրված լինել ծննդավայր Թբիլիսիից, ուր բնակվում է նա, հեռու մնալ հարազատներից ու կարողանալ սիրով եւ բարեխղճորեն կատարել ղեկավարի պատասխանատու, բազմահոգ աշխատանքը, հատուկ է միայն պատասխանատվության բարձր զգացումով օժտված ու իր գործին նվիրվել կարողացող մարդուն:

Կնոջ փխրուն ուսերի համար ոչ հեշտ ղեկավար աշխատանքը մեր սիրելի գործընկերը գերազանց կարողանում է ներդաշնակել բոլորիս սիրելի «Վրաստան» թերթի տարածման եւ բազում այլ հասարակական գործերի հետ:

Մանանա Մանուկյանը մարդկային ջերմությամբ է պարուրում իր կրթօջախի սաներին ու գործընկերներին՝ միաժամանակ լինելով նրանց համար սրտակից բարեկամ եւ պահանջկոտ ղեկավար: Նրա նրբանկատ վարքագիծը միասնության մեջ է պահում ողջ կոլեկտիվը:

Ահա ինչու, նրան սիրում ու զնահատում են ե՛լ եկող ու զնացող սաները, ե՛լ գործընկերներն ու ճանաչողները:

Հարգարժան Մանանա Մանուկյան, մե՛ր սիրելի ընկեր ու բարեկամ, դպրոցի աշխատակազմը, Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոնակատարությունների այս օրերին շնորհավորում է Ձեզ ծննդյան ու աշխատանքային տարեդարձերի առթիվ: Եղեք միշտ քաջառողջ, էներգիայով լեցուն եւ միշտ մեզ հետ:

ՉԱՆԱԽՉԻԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ





# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱԿԱՆ ՍԵՂԱՆ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՆԱԿԵՏՈՒՄ

Հայաստանի նախագահ, Ձինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի, պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ, ավանդույթի համաձայն, տոների նախաշեմին այցելեց Հայաստանի սահմանամերձ բնակավայրերից մեկը եւ եղավ պետական սահմանի պահպանության տեղամասում ու մարտական դիրքում:



Սերժ Սարգսյանը հանդիպեց մարտական դիրքում ծառայությունը անցկացնող զինվորների եւ հրամանատարների հետ, շրջայց կատարեց մարտական հենակետում եւ ծանոթացավ ծառայության անցկացման, ինչպես նաեւ զինվորների կենցաղային պայմաններին:

Սերժ Սարգսյանը հանդիպեց մարտական դիրքում ծառայությունը անցկացնող զինվորների եւ հրամանատարների հետ, շրջայց կատարեց մարտական հենակետում եւ ծանոթացավ ծառայության անցկացման, ինչպես նաեւ զինվորների կենցաղային պայմաններին:


Տոնական սեղանի շուրջ Սերժ Սարգսյանը գրուցեց նրանց հետաքրքրող եւ հուզող հարցերի մասին, շնորհավորեց ու բարենախոսեց զինվորներին եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

### ԱՅՅԵՆՈՒԹՅՈՒՆ՝ «ԵՆԱՐՄՈՒՄ» ՊԱՆՁԵՆ



Սերժ Սարգսյանը ավանդույթի համաձայն, փարվա եզրագծին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ եւ Հայաստանի բարչրագույն ղեկավարության ուղեկցությամբ, այցելեց «ԵՆԱՐՄՈՒՄ» զինվորական պանթեոն, հարգանքի փոխանակեց Հայրենիքի անկախության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ



Հունվարի 12-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպեց Ազգային ժողովի ղեկավար կազմի հետ:

Հանդիպման սկզբում Սերժ Սարգսյանը նշեց, որ թեեւ պարբերաբար հանդիպում է ունենում Աժ նախագահի, այլ պատգամավորների հետ, սակայն նման ձեռնարկով հանդիպումն աննախադեպ է եւ նպատակ ունի առավելապես կենտրոնանալ սահմանադրության փոփոխություններից հետո կառավարման նոր համակարգի պայմաններում իրականացվելիք մեծ ծավալի աշխատանքի, բոլորին հուզող արդիական մի շարք հար-

ցերի վրա՝ նկատի առնելով, որ Աժ գործունեության իր տեսլականի մասին համաձայնորեն մատուցելու համար, որի մասին Սերժ Սարգսյանը հարցազրույց է անցրել, ինչպես նաեւ առկա խնդիրների եւ առաջիկա անելիքների, խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում Աժ-ի աշխատանքի առաջնահերթ ուղղությունների, ինչպես նաեւ առկա խնդիրների ու մարտահրավերների վերաբերյալ:

## ՎԱԿԵՐԱՑՎԵԼ Է ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄԻՏՈՒՄ

Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը Հայաստանում նախորդ տարվա առաջին երեք եռամսյակում աճել է:



Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը 2017-ի առաջին եռամսյակում եղել է 58,9, երկրորդում՝ 60,5, երրորդում՝ 63,4 տոկոս: Ընդ որում, տնտեսապես ակտիվ ակտիվ են եղել տղամարդիկ:

## ՈՎՔԵՐ, ԵՐԲ ԵՎ ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ՊԵՏՔ Է 2018-ԻՆ ԸՆՏՐԵՆ ՆԱԽԱԳԱՐ, ՎԱՐՉԱՊԵՏ, ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԵՐ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐ


Հայաստանի ամբողջությամբ խորհրդարանական կառավարման համակարգին կսկսի անցնել 2018թ. փետրվարից:

Նոր սահմանադրության համաձայն, փետրվարի 19-28-ի ընթացքում առաջարկվելու են Հայաստանի նախագահի թեկնածուները: Իսկ մարտի առաջին տասնօրյակում խորհրդարանը ընտրելու է Հայաստանի 4-րդ նախագահին:

Վարչապետի իրենց թեկնածուներին: Թեկնածուներին առաջարկելուց հետո, Ազգային ժողովը նիստի ժամանակ պետք է ընտրի վարչապետ, սակայն խորհրդարանի ընտրած թեկնածուին վարչապետ պետք է նշանակի Հայաստանի նախագահը:

Նշանակվելուց հետո, արդեն ՀՀ վարչապետը 5-օրյա ժամկետում առաջարկելու է փոխվարչապետներին, նախարարների թեկնածուներին. նախագահը նրանց նշանակում է եռօրյա ժամկետով:

### ՄԱՅՆԵԼ Է ՀԱՅՏԻ ՀԱՅ ԲԱՍԿԵՏՈՒՄՍ ԱՐՄԵՆԱԿ ԱՄՉԱԳՅԱԼԸ



Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի տեղեկավարության պրեսի 88-րդ փարուն մահացել է բոլոր ժամանակների ամենահայտնի եւ ամենափոփոխական հայ բասկետբոլիստ Արմենակ Ալաջայանը, որը վերջին տարիներին բնակվում էր Կանադայում:





### ԽՈՅ - 21.03-20.04



Խոյերի համար եկել է ժամանակը ազատվելու այն ամենից, ինչը խանգարում է իրականացնել ամենացանկալի իդեան ու երազանքները: Ձեր ստեղծագործական կարողությունները կբացահայտվեն բացարձակ նոր լույսի ներքո: Անշարժ գույքի, երեխաների ծննդի եւ անձնական կյանքի բոլոր հարցերը կլուծվեն հեշտությամբ: Բարդություններ կարող են ծագել կարիերայի ճանապարհին, ինչը ձեզանից կպահանջի համբերություն: Կարելի է, որ ստեղծագործական ոգին պահպանվի ձեր առօրյայում:

Ընտանիքում փոխհարաբերությունների արդյունքը կապահովի ամուսնական հարաբերությունների ներդաշնակությունը: Աշխատավարձը իրավիճակը ողջ տարվա ընթացքում կլինի բարձր: Պահպանեք շրջահայեցողություն, խուսափեք արագ վճիռներից:

### ՑՈՒԼ - 21.04-20.05



Տարին կնշանավորվի առանձնապես ընտանեկան հարկի կայունությամբ: Դուք կարող եք զվարճանալ ճանապարհորդություններով: Կունենաք նոր մարդկանց հետ շփվելու, ուսանելու հնարավորություններ, ինչը եւ թարմ գաղափարներ կբերի ձեր առօրյային:

Ցանկալի է զբաղվել ընտանեկան հարկի բարեկարգմամբ: Դուք կունենաք նոր բնակարան գնելու, ունեցածը վերանորոգելու, նաեւ ծնողներին օգնելու լայն հնարավորություններ:

Ձեր անձնական կյանքում սպասվում են պոզիտիվ փոփոխություններ: Հիմա լցված եք որեւէ բան կյանքում փոխելու ցանկությամբ, փորձեք փոփոխությունը սկսել ձեզանից:

Աշխատավարձում ջանացեք պահպանել կայուն ու խաղաղ մթնոլորտ: Եթե դեկավարի պաշտոն էք գրավում, ջանացեք խուսափել վեճերից: Քանի դեռ չեք գտել նոր, մի՛ հրաժարվեք ունեցած հինից:

### ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐ - 21.05-21.06



Տարին բավականին բարդ կլինի: Պահանջվում են ոչ միայն համբերություն ու արիություն, այլ նաեւ նոր գիտելիքներ: Անհրաժեշտ է ակտիվորեն եւ ջանադրաբար հետեւել գիտելիքների ձեռքբերմանը: Մի վախեցեք նոր գործից: Եվ, իհարկե, կարելի է անընդմեջ շփվել մարդկանց հետ. ոչ մի դեպքում չմեկուսանաք, կիսվեք ձեզ հուզող հարցերով:

Ի բնե ժող ու շփվող Ցուլերի համար ընդհանուր է ծանոթների շրջանակն ընդլայնելու առավելագույն հնարավորություններ: Անձնական կյանքը կլինի առավել հավասարակշռված ու խաղաղ:

Ձեր կարիերայում սպասվում է տեսական հաջողություն: Փողի հարցով անհանգստանալու կարիք չկա. այն կգա ժամանակին եւ անհրաժեշտ չափով:

Առողջության հարցերն այս տարի շատ կկարելի դրվեն: Ցուցաբերեք լուրջ մոտեցում նույնիսկ այն դեպքում, եթե նույնիսկ հորիզոնում չկա որեւէ վտանգ ու սպառնալիք: Հետազոտվեք, խորհրդակցեք բժշկի հետ:

### ԽԵՑԳԵՏԻՆ - 22.06-21.07



Տարին կլինի հաջողակ եւ պոզիտիվ: Բարձր կլինի ստեղծագործական ներուժը: Հիմա շատ կարելի է ձեռք բերել ֆինանսական ինքնուրույնություն: Անձնական կյանքում սպասվում են բարդություններ, անհրաժեշտ է զգուշություն եւ համբերություն: Ձեզանից պահանջվում է ոչ միայն փող վաստակել, այլ ստեղծել ամուր նյութական բազա: Կարգավորեք օրվա ռեժիմը, սննդակարգում անցեք էկոլոգիապես մաքուր մթերքների:

## ԱՄՏՂԵՐԸ ԳՈՒՇԱԿՈՒՄ, ԲԱՅՅՅ ԶԵՆ ՊԱՐՏԱԳՐՈՒՄ ՏԱՐԻՆ` ՏՄԱՆԵՐԿՈՒ ԴԵՄՔԵՐՈՎ

Անձնական կյանքը ձեզ կարող է ղփվարթվալ, բայց դա ժամանակավոր է կամ թվացյալ: Եթե ցուցաբերեք կամքի ուժ, հաջողությամբ կհաղթահարեք այդ բարդ շրջանը:

Աշխատանքի ոլորտը եւ կարիերան այս տարի առանձնապես չի անհանգստացնի ձեզ: Կա աշխատանքը կամ մասնագիտությունը փոխելու հավանականություն: Ժամանակ է հրաժարվել պարտք վերցնելու սովորությունից, եւ անհրաժեշտ է ապավինել սեփական ուժերին: Ձեր առողջությանը ոչինչ չի սպառնում: Երբեմն իրենց զգացնել կտան հիմ, բրոնխի հիվանդությունները:

### ԱՌՅՈՒԾ - 22.07-22.08

Տարին Առյուծի համար վճռորոշ է, ճակատագրական: Դուք հիմա բացահայտում եք ձեր հնարավորությունները: Ոչնչից մի երկուդեք, նույնիսկ, եթե հարկ լինի հրաժեշտ տալ շատ կարելի ու անհրաժեշտ բաներին: Արժե ուշադրության տակ առնել առողջությունը: Աշխատանքը շատ կլինի եւ ոչ միշտ հաճելի:



Այս տարի ճիշտը եւ օգտակարը ձեզ համար հրաժարումն է ուրիշի կարծիքից: Հիմա կարելի է պատասխանել ամենագիտակցորդ հարցերին. «Ո՞վ եմ ես, ո՞ր եմ գնում, որո՞նք են իմ կյանքի նպատակները»:

Անձնական կյանքում, ովքեր ազատ են, ցավոք, պետք է հաշտվեն մեծակության հետ: Իհարկե, ժամանակավոր մեծակության, այս տարին ամուսնության համար հարմար չէ:

Ողջ տարվա ընթացքում կունենաք բավարարից ավելի աշխատանք, բայց այն ձեզ կբերի որոշ փորձություններ: Շան խորհուրդն է դիմանալ այդ փորձություններին:

Հետեւեք առողջությանը ողջ տարվա ընթացքում: Մի՛ ծանրաբեռնեք ձեզ մարգական վարժանքներով եւ ֆիզիկական աշխատանքով, դիմեք բժշկի, հետազոտվեք:

### ԿՈՒՅՍ - 23.08-22.09



2018-ին ձեզ հարկ կլինի զբաղվել ներաշխարհով, մտածել վերուստ սահմանված մեքեր առաքելության մասին: Սեր խնդիրներ կբերի, բայց եթե հաղթահարեք փորձությունները, ապա «դժվարին սերը» կթվա ամենացանկալին: Տարվա երկրորդ կեսին ուշադրություն դարձրեք առողջությանը:

2018-ին Կույսին հարկ կլինի գիտակցել եւ համոզվել, որ բոլորն էլ միայնակ են: Մենք զալիս ենք աշխարհ մեծակ եւ մեծակ հեռանում: Դրա գիտակցումը պետք է լինի ոչ թե դատապարտվածության զգացում, այլ խորապես ապրված համոզումը: Ձեզանից պահանջվում է հաղթահարել բոլոր փորձությունները:

Անձնական ոլորտում փորձություններ են սպասվում երիտասարդ սիրահարներին ու ամուսիններին: Սեր փնտրողները կգտնեն իրենց կյանքի ուղեկցին:

Աշխատանքի հարցում Կույսը կունենա մասնագիտությունը փոխելու անդինադրելի թվացող ձգտում, բայց կղձվարանա կողմնորոշվել, թե ի՞նչ է իր ուզածը:

Ֆինանսական դժվարությունները ձեզ շրջանցում են:

Առողջության պլանում պահանջվում է ամենայն ուշադրություն: Ի դեպ, Կույսի առողջությունը ուղղակիորեն կախված է նրա հոգեւոր զարգացումից ու աճից:

### ԿՇԵՆՔ - 23.09-22.10



2018թ. դուք կճշակեք ազատության համը, կազատվեք բոլոր սահմանափակումներից, պարտադրված կարծրատիպերից: Եկել է ժամանակը ազատվել իր դերը կատարած «բեռից» եւ

որոշակիացնել նպատակները: Տարին հագեցված կլինի հոգեպես մոտ ու սրտակից մերձավորների հետ շփումներով: Աշխատանքում եւ բիզնեսում սպասվում են հաջողություններ, եւ ֆինանսական խնդիրների լուծում:

Ժամանակ է իրականացնել ձեր ամենավերական ծրագրերը: Բնավ չանհանգստանաք նրանից, թե դրան ինչպես կարձագանքի շրջապատը: Ձեր նպատակը մեկն է՝ հաստատուն գնալ դեպի այն: Կշեռքներից ունանք կցանկանան օգնել մարդկանց, հիմա ժամանակ է զբաղվել բարեարությանը:

Նույնիսկ երիտասարդ Կշեռքը կգերադասի սիրած էակի հետ հոգեւոր կապի անհրաժեշտությունը:

Ամուսիններին խորհուրդ չի տրվում ձեռնարկել բնակարանի վերանորոգում կամ նոր բնակարանի գնում:

Աշխատավարձում ջանացեք վերապահ կեցվածքից, չփորձեք մեկուսանալ կամ ձեզ բարձր դասել գործընկերներից: Կարիերայի ոլորտում ամեն ինչ հաջող կընթանա:

Կշեռքի առողջական վիճակը անհանգստանալու տեղիք չի տա:

### ԿԱՐԻՃ - 23.10-21.11



Տարին կլինի վառ, հաջող եւ կնշանավորվի ինչպես գործնական, նույնպես եւ հոգեւոր զարգացմամբ: Դուք կվաստակեք հեղինակություն: Այդով հանդերձ, դուք ունակ եք գիտակցված ռիսկի ձեռնարկներ, մտածելակերպի փոփոխության առումով: Կարիճը պատրաստ է ընդունել նորը, զարգանալ՝ հենմվել սեփական փորձին, ներուժին:

Ժամանակ է վճռակամորեն ներկայացնել սեփական «ես»-ը: Վերջապես դուք ձեզ զգում եք ինքնավստահ:

Շունը խորհուրդ է տալիս սրբորեն պահպանել ընտանիքը. չէ՛ որ դա ձեր հեռախոսն է: Մի՛ կտրվեք արմատներից: Աշխատավարձում մի՛ խուսափեք պատասխանատվությունից, քանի որ այժմ որոշվում է ձեր մասնագիտացման ճակատագիրը: Դուք հիմա կարող եք բացահայտել ձեր իսկական կոչումը եւ վստահորեն հետեւել սրտի կանչին: Ֆինանսական գործեր ողջ տարին կլինեն հաջող եւ եկամտաբեր:

Ընդհանուր առմամբ, ձեր առողջությանը ոչինչ չի սպառնում:

### ԱՂԵՂՆԱՎՈՐ - 22.11-21.12



Դուք կիրականացնեք ձեր նվիրական երազանքները: Ի դեպ, ունեք շանս՝ ուղեւորվելու երկրագնդի ամենահեռավոր անկյունները: Աղեղնավորը կզգա, որ դարձել է առավել հաջողակ, ինքնավստահ, ազդեցիկ, կբարձրանա նրա ինքնարժեքը:

Ձեր ներաշխարհում կկատարվի վերաարժեւորման գործընթաց: Շունը խորհուրդ է տալիս Աղեղնավորին ամենայն լրջությամբ զբաղվել դրանցով, որովհետեւ հիմա կազմավորվում է նրա իդեալների եւ առաջնահերթությունների համակարգը: Եթե կյանքը ձեզ բաժանի որոշ ծանոթներից ու ընկերներից, ընդունեք խաղաղ:

Անձնական կյանքում ամեն ինչ լավ ու կայուն է: Եթե դուք ձեր իդեալի որոնումներում եք, ապա նրա հետ հանդիպմանը սպասեք հեռավոր ժամապարհորդություն կատարելիս:

Քանի որ աշխատավարձում արդեն արձանագրել եք լուրջ ձեռքբերումներ, հիմա ժամանակ է ամրապնդել դիրքերը:

Ինչ վերաբերում է ֆինանսներին, ցավոք, 2018-ը ֆինանսների հարցում բարեհամբույր չի լինի Աղեղնավորի նկատմամբ: Նյութական դժվարությունները կարող են նրան հանել հուճից:

Առողջությունն Աղեղնավորին առանձնակի անհանգստություն չի բերի:

### ԱՅԾԵՂՅՈՒՐ - 22.12-19.01



Այծեղջյուրների համար փորձությունների չափաբաժինը 2018-ին ավելին կլինի: Ձեզանից Շունը սպասում է նպատակների, խնդիրների վերանայում: Մի պահ դուք կարող եք կորցնել ինքնավստահությունը: Եթե սթափ նայեք իրավիճակին, կտեսնեք, որ ձեզանից պահանջվում է հիմնավոր փոխել բնավորությունը, աշխարհայացքը, սովորությունները: Սրտակցություն կգտնեք ընկերների շրջանում, ովքեր միշտ կլինեն ձեր կողքին:

Այս տարի ամեն հաջողություն ու ձեռքբերում ձեզ կտրվի միայն համառ աշխատանքի ու համբերության արդյունքում: Բավականին հաջող է դասավորվում Այծեղջյուրի անձնականը: Ձեր կյանքում կհայտնվի զուգընկեր, ով իր համբերատարությամբ, փոխընթերցման պատրաստակամությամբ ճակատագրի նվեր է ձեզ համար: Ձեզ մնում է միայն գնահատել նրան ըստ արժանվույն: Հանուն ընտանիքի պահպանման, խուսափեք պատահական կապերից:

Աշխատավարձում եղեք առավել նպատակասլաց: Ջանացեք չանցնել ընդունված սահմանները: Ֆինանսական հարցերը պահանջում են զգույշ եւ գրագետ մոտեցում: Տարվա պահանջն այն է, որ բավարարվեք նվազագույնով: Խորհուրդ չի տրվում զբաղվել բիզնեսով: Առանձնահատուկ ուշադրություն դարձրեք առողջությանը:

### ՋՐՈՍՍ - 20.01-19.02



Ջրոսը կլինի քննություն տվողի կարգավիճակում, եւ նրանից կպահանջվի շրջապատի հետ փոխընթերցման կարողություն, ներդրմանության ցուցաբերում: Անհրաժեշտ է հաշտվել այն մտքի հետ, որ յուրաքանչյուր մարդ ապավինում է իր ներուժին: Ապա կարող են դրսևորվել ձեր բնավորության բացասական գծերը՝ հիշաշարությունը, ազախությունը, ինտրիգների հավակածությունը:

Ջրոսի գերխնդիրն այս տարի շրջապատի հետ շփման եզրեր գտնելն է, բացահայտելը, թե ինչ օգուտ կարող է տալ աշխարհին եւ ինչ ստանալ նրանից: Միայնակ Ջրոսներին սպասվում է ճակատագրական հանդիպում. նրանք կգտնեն իրենց երկրորդ կեսին: Ամուսնացածները կամրապնդեն ընտանեկան կապերը:

Ձեր կարիերայում սկսվում է հիանալի շրջան: Ջրոսը կարող է ձեռնարկել ցանկացած գործ եւ անխափան հասցնել ավարտի: Ջրոսին կբավարարի նաեւ ֆինանսական չափաբաժինը:

Առողջական վիճակը, ընդհանուր առմամբ, բավականին լավ է:

### ՉԿՆԵՐ - 20.02-20.03



Շարունակվում է ձեր կյանքի ստեղծագործական ռիթմը: Հիմա պետք է հերկել մեծ դաշտ, ստանալ արդյունքը: Անձնական կյանքում ամեն ինչ խաղաղ է: Կարող եք համարձակ մեկնել ճանապարհորդության: Մի փոքր կբարդանա շրջապատի հետ ձեր շփումը: Ինչ արած, ամեն բարեկամություն չէ, որ իսկական է. Չուկը պետք է ընդունի այդ ճշմարտությունը:

Տարվա բոլոր խնդիրները կապված են խաղաղ աշխատանքի ապահովման հետ: Դուք այն կկատարեք սիրով եւ բարեխղճորեն:


Անձնականը, ինչպես արդեն նշվեց, խաղաղ է ու կայուն: Մի որ բոլոր հարցերում, ձեզ ուղեկցում է հաջողությունը:

Կարիերան, աշխատանքը կընթանա իրենց բնական հունով, ձեզանից պահանջվում է համբերություն եւ նվիրում:

Այս տարի ձեր խնդիրն է ամրապնդել առողջությունը:



ՀՈՒՆՎԱՐ	ՓԵՏՐՎԱՐ	ՄԱՐՏ	ԱՊՐԻԼ	ՄԱՅԻՍ	ՀՈՒՆԻՍ
Երկ. 1 8 15 22 29	5 12 19 26	5 12 19 26	2 9 16 23 30	7 14 21 28	4 11 18 25
Երք. 2 9 16 23 30	6 13 20 27	6 13 20 27	3 10 17 24	1 8 15 22 29	5 12 19 26
Չրք. 3 10 17 24 31	7 14 21 28	7 14 21 28	4 11 18 25	2 9 16 23 30	6 13 20 27
Հինգ. 4 11 18 25	1 8 15 22	1 8 15 22 29	5 12 19 26	3 10 17 24 31	7 14 21 28
Ուրբ. 5 12 19 26	2 9 16 23	2 9 16 23 30	6 13 20 27	4 11 18 25	1 8 15 22 29
Շաբ. 6 13 20 27	3 10 17 24	3 10 17 24 31	7 14 21 28	5 12 19 26	2 9 16 23 30
Կիր. 7 14 21 28	4 11 18 25	4 11 18 25	1 8 15 22 29	6 13 20 27	3 10 17 24



# 2018-Ը «ՎՐԱՍՏԱՆԻ» ՀԵՏ

**ՀՈՒՆՎԱՐ 1, 2** - Լող տարի:  
**7** - Սուրբ Ծնունդ: **19** - Ջրօրհնեք: **ՄԱՐՏ 3** - Մայրության օր: **8** - Կանանց միջազգային օր: **ԱՊՐԻԼ 6** - Կարմիր ուրբաթ: **8** - Սուրբ Ջատիկ: **9** - Վրաստանի ազգային միասնության օր: Հանգուցյալների հիշատակի օր: **ՄԱՅԻՍ 9** - Հաղթանակի օր: **12** - Սուրբ Անդրեաս Առաքյալի հիշատակի օր: **26** - Վրաստանի պետական անկախության մերականգնման օր: **ՕԳՈՍՏՈՍ 28** - Մարիամորդ: **ՀՈՒՆՎԱՐ 14** - Սցիսթորա: **ԿՐԻՍՏՈՍԵՐ 23** - Գիրգորա:

Հայ Առաքելական եկեղեցու տարվապար տոմերը, որոնք Հայաստանում ոչ աշխատանքային օրեր են: **ՀՈՒՆՎԱՐ 1, 2** - Լող տարի: **5** - Գրագրության տոն: **6** - Սուրբ Ծնունդ եւ Աստվածախաղութության օր (Ջրօրհնեք): **7** - Հանգուցյալների հիշատակի օր: **27** - Սուրբ Սարգիս Ջորավարի հիշատակի օր: **ՄԱՐՏ 30** - Կարմիր ուրբաթ: **ԱՊՐԻԼ 1** - Սուրբ Ջատիկ: **2** - Հանգուցյալների հիշատակի օր: **24** - Յերասպանության գրիզի հիշատակի օր: **ՀՈՒՆՎԱՐ 27** - Դայնտասկերպություն: **28** - Հանգուցյալների հիշատակի օր: **ՕԳՈՍՏՈՍ 17** - Վերափրկում: **18** - Հանգուցյալների հիշատակի օր: **ՍԵՊՏԵՄԲԵՐ 13** - Խաչվերդ: **14** - Հանգուցյալների հիշատակի օր:

Խմբագիր՝  
**ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ**

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105  
 Գ.Աթոնելի փ. 5 Գեռ. 2990-739, 2990-774  
[www.vrastan.ge](http://www.vrastan.ge)  
 E-mail: [vrastan@caucasus.net](mailto:vrastan@caucasus.net)

Գրանցման վկայական  
 № 4 4 - 1439  
 «ԿՈՒՆՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”  
 Тбилиси, Грузия  
 <VRASTAN>  
 Georgia, Tbilisi  
 Индекс 66445

ՀՈՒՆԻՍ	ՄԱՅԻՍ	ՀՈՒՆՎԱՐ	ՄԱՐՏ	ՓԵՏՐՎԱՐ	ՀՈՒՆՎԱՐ
3 10 17 24 31	5 12 19 26	1 8 15 22 29	3 10 17 24	6 13 20 27	2 9 16 23 30
4 11 18 25	6 13 20 27	2 9 16 23 30	4 11 18 25	7 14 21 28	3 10 17 24 31
5 12 19 26	7 14 21 28	3 10 17 24 31	5 12 19 26	1 8 15 22 29	4 11 18 25
6 13 20 27	1 8 15 22 29	4 11 18 25	6 13 20 27	2 9 16 23 30	5 12 19 26
7 14 21 28	2 9 16 23 30	5 12 19 26	7 14 21 28	3 10 17 24 31	6 13 20 27
1 8 15 22 29	3 10 17 24	6 13 20 27	1 8 15 22 29	7 14 21 28	1 8 15 22 29
2 9 16 23 30	4 11 18 25	7 14 21 28	2 9 16 23 30	1 8 15 22 29	2 9 16 23 30